ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԿԱԶՄՄԱՆ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ

Բովանդակություն

Ներածություն.....3

1.Աշխատակազմի հաստիքացուցակը.....4

2. Հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք.....5

3. Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը..... 6

4. Տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք 7

5. Աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի համամասնությունը սեփական եկամուտների նկատմամբ..... 7

6. Աշխատակազմի աշխատակիցների դրույքաչափերի համամասնության սահմանումը.....7

7. Աշխատակազմի հաստիքացուցակը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի օրինակելի ձևեր.....8

Ներածություն

Սույն մեթոդական ուղեցույցում ներկայացված են համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) հաստիքացուցակի կազմման և հաստիքների և պաշտոնային դրույքաչափերի համամասնության սահմանման վերաբերյալ մեթոդական խորհրդատվություններ, որոնք կիրառելիս պետք է հաշվի առնել համայնքներին բնորոշ առանձնահատկությունները:

Ներկայումս Աշխատակազմերի հաստիքացուցակներում առկա են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ մի շարք Աշխատակազմերի հաստիքացուցակներում տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հաստիքների թվաքանակը գերազանցում է համայնքային ծառայողների թվաքանակին, այն դեպքում, երբ Աշխատակազմերի մասնագիտական գործունեությունն իրականացնում են համայնքային ծառայողները, իսկ տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք իրականացնում են քաղաքական, հայեցողական, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց լիազորությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական սպասարկումը: Միաժամանակ, մի շարք Աշխատակազմերի հաստիքացուցակներում մասնագիտական գործունեություն իրականացնող անձանց հաստիքները (Օրինակ՝ իրավախորհրդատու, տեղեկատվական գործակալ, գանձապահ, հարկային գործակալ) նախատեսվում են հայեցողական, կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմում, մինչդեռ դրանք պետք է նախատեսվեն համայնքային ծառայության պաշտոններում:

Վերը նշվածից բացի՝ մի շարք Աշխատակազմերի հաստիքների պաշտոնային դրույքաչափերի ընդհանուր գումարը գերազանցում է համայնքի սեփական եկամուտները:

Համապատասխան Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների միևնույն խմբի և ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողներն ունեն հավասար պաշտոնային դրույքաչափի իրավունք: Մինչդեռ, որոշ Աշխատակազմերում խախտվում է վերոնշյալ դրույթը: Միաժամանակ, համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերը, ըստ պաշտոնների ենթախմբերի, աստիճանակարգված չեն՝ ելնելով տվյալ պաշտոնը զբաղեցնող անձի աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունից:

Սույն մեթոդական առաջարկությունների կիրառմամբ միատեսակ կդառնան Աշխատակազմերի հաստիքացուցակները, օպտիմալ կառուցվածքի հաստատման պարագայում կբարձրանա համայնքի կողմից մատուցվող ծառայությունների որակը և առավել արդյունավետ կօգտագործվեն համայնքի ֆինանսական միջոցները:

1. Աշխատակազմի հաստիքացուցակը

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարն, իր պաշտոնը ստանձնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը: Համայնքի ավագանու կողմից հաստատված աշխատակազմի աշխատողների թվաքանակը կամ հաստիքացուցակը հաստատված, ինչպես նաև փոփոխված կամ լրացված է համարվում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից (<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդված):

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հետևյալ տոկոսաչափերով.

- ✓ մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 42,57 տոկոս.
- ✓ 1001-ից մինչև 5000 բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 52,06 տոկոս.
- ✓ 5001-ից մինչև 20000 բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 66,55 տոկոս.
- ✓ 20001-ից մինչև 75000 բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 71,04 տոկոս.
- ✓ 75000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 85,52 տոկոս:

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային ենթակայության հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Աշխատակազմն իր գործունեությունն իրականացնում է **համայնքային ծառայողների**, ինչպես նաև անձնակազմի լիազորությունների կատարման համար անհրաժեշտ **տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց** միջոցով: Աշխատակազմում իրականացվում է համայնքային ծառայություն, որը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

Համայնքի ղեկավարի պաշտոնը քաղաքական պաշտոն է: Վերջինս Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով

սահմանված կարգով ընտրովի պաշտոն է, որը զբաղեցնող պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ընդունում է քաղաքական որոշումներ և համակարգում դրանց կատարումը: Քաղաքական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձը փոփոխվում է քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հայեցողական պաշտոնը նշանակովի պաշտոն է, որը զբաղեցնող պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ընդունում է որոշումներ և համակարգում դրանց կատարումը: Հայեցողական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձը կարող է փոփոխվել քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում:

Համայնքային ծառայության պաշտոնը քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներից անկախ մասնագիտական գործունեություն է, որն իրականացվում է Աշխատակազմերում՝ (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում) Հայաստանի Հանրապետության օրենքներով այդ մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման նպատակով:

Տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք քաղաքական, հայեցողական, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց լիազորությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական սպասարկում իրականացնողներն են:

Տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքականությունն իրականացնում են **համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու** և **հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց** միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով նրանց վերապահված լիազորությունների շրջանակներում, քաղաքական որոշումների ընդունմամբ և դրանց կատարման համակարգմամբ:

2. Հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք

Հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում է համայնքի ղեկավարը:

Համայնքում հայեցողական պաշտոններ են համարվում համայնքների ղեկավարի տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների պաշտոնները, Երևանի, Գյումրու և Վանաձորի գլխավոր ճարտարապետների պաշտոնը, Երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոնները, խոշորացված համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնը:

Սույն մեթոդական ուղեցույցով հայեցողական պաշտոնների մասով առաջարկվում է Աշխատակազմերի հաստիքացուցակներում համայնքի ղեկավարի տեղակալի թվով

1 պաշտոնից (խոշորացված համայնքներում՝ վարչական ղեկավարների պաշտոններից) բացի նախատեսել նաև՝

- մինչև 5000 բնակչություն ունեցող համայնքներում՝ առավելագույնը 1 հայեցողական պաշտոն:
- 5001-15.000 բնակչություն ունեցող համայնքներում՝ առավելագույնը 2 հայեցողական պաշտոն:
- 15.001-50.000 բնակչություն ունեցող համայնքներում՝ առավելագույնը 3 հայեցողական պաշտոն:
- 50.001-100.000 բնակչություն ունեցող համայնքներում՝ առավելագույնը 5 հայեցողական պաշտոն:
- 100.001 և ավելի բնակչություն ունեցող համայնքներում՝ առավելագույնը 6 հայեցողական պաշտոն:

3. Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը

Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը և համայնքային ծառայության յուրաքանչյուր խմբում և ենթախմբում ընդգրկվող պաշտոնների անվանացանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

ՀՀ համայնքների ղեկավարներին առաջարկվում է Աշխատակազմի հաստիքացուցակում նախատեսել միայն ներքոհիշյալ ոլորտները կարգավորող կառուցվածքային ստորաբաժանումներ, կամ դրանց բացակայության դեպքում՝ համապատասխան մասնագետների հաստիքներ՝

- քաղաքաշինություն, գյուղատնտեսություն և հողի վերահսկողություն
- ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման
- առևտրի և սպասարկման, գովազդի և տուրիզմի զարգացման, բնապահպանության
- կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության (5 հազար և ավելի բնակչություն ունեցող համայնքներում սոցիալական աշխատող)
- կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի
- իրավաբանական, քարտուղարության, տեղեկատվական տեխնոլոգիաների (օպերատոր)
- ներքին աուդիտի

Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրի հիման վրա հաստատում է համապատասխան համայնքի ղեկավարը՝ համայնքային

ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելուց կամ դրանում սահմանված կարգով փոփոխություններ կատարելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

4. Տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք

Տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք քաղաքական, հայեցողական, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց լիազորությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական սպասարկում իրականացնողներն են:

ՀՀ համայնքների ղեկավարներին առաջարկվում է համայնքապետարանների հաստիքացուցակներում նախատեսել տնտեսվարի, գործավարի, վարորդի, էլեկտրիկի, հավաքարարի, պահակի, բանվորի և այլ հաստիքներ՝ ելնելով համայնքի առանձնահատկություններից, որոնց ընդհանուր թվաքանակը չպետք է գերազանցի համայնքային ծառայության հաստիքների 40 տոկոսը:

5. Աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի համամասնությունը սեփական եկամուտների նկատմամբ

Աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված պաշտոնները զբաղեցնող աշխատակիցների աշխատավարձերի (ՏԻՄ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ աշխատավարձը ներառում է պաշտոնային դրույքաչափը, հավելավճարները, պարգևատրումները և հավելումները) հանրագումարը չպետք է գերազանցի համայնքի սեփական եկամուտները:

6. Աշխատակազմի աշխատակիցների դրույքաչափերի համամասնության սահմանումը

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ աշխատակազմի յուրաքանչյուր աշխատողի պաշտոնային դրույքաչափը չի կարող գերազանցել տվյալ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի՝

- ✓ մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,95 տոկոսը.
- ✓ 1001-ից մինչև 5000 բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,65 տոկոսը.
- ✓ 5001-ից մինչև 20000 բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,43 տոկոսը.
- ✓ 20001-ից մինչև 75000 բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,26 տոկոսը.
- ✓ 75000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի համար՝ 81,14 տոկոսը:

Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբում ընդգրկված պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը չպետք է գերազանցի տվյալ ենթախմբին հաջորդող ենթախմբի

պաշտոնային դրուքաչափի 90 տոկոսը՝ աստիճանակարգված և հաշվարկված աշխատակազմի քարտուղարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ:
Պաշտոնային դրույքաչափերն անհրաժեշտ է սահմանել՝ հաշվի առնելով <<Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> ՀՀ օրենքով սահմանված Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափը:

7. Աշխատակազմի հաստիքացուցակը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի օրինակելի ձևեր

Ստորև ներկայացված են Աշխատակազմի հաստիքացուցակը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի օրինակելի Ձևեր:

Օրինակելի Ձևերը հնարավորություն են ընձեռում բոլոր համայնքներում հաստատել միատեսակ հաստիքացուցակներ, պաշտոնային դրույքաչափեր, կառուցվածքային ստորաբաժանումներ և այլն:

Ձև

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ---------- ՄԱՐԶԻ
---------- ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« » ---------- 20-- Թ. N – Ա

---------- ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել ---------- համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն NN 1-2 հավելվածների.

2. Ուժը կորցրած ճանաչել ---------- համայնքի ավագանու ----- թվականի <<---------- համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N----- որոշման NN 1-2 հավելվածները (համայնքի ավագանու նախկին որոշումն է)

3. Առաջարկել ---------- համայնքի ղեկավարին՝ ---------- համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.

Համայնքի ավագանու անդամներ՝

Անուն Ազգանուն	Կողմ_____	Դեմ_____	Ձեռնպահ_____
	Կողմ_____	Դեմ_____	Ձեռնպահ_____
	Կողմ_____	Դեմ_____	Ձեռնպահ_____
	Կողմ_____	Դեմ_____	Ձեռնպահ_____

---------- համայնքի ղեկավար՝ Անուն, Ազգանուն

« » _____ 20—թ.

Հավելված 1
ՀՀ ---------- մարզի
----------համայնքի ավագանու
20--թ. --------- ---ի N -Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ---------- ՄԱՐԶԻ ---------- ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողի վերահսկողության բաժին
2. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին
3. Առևտրի և ապասարկման, գովազդի և տուրիզմի զարգացման բաժին
4. Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժին
5. Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժին
6. Իրավաբանական, քարտուղարության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին
7. Ներքին աուդիտի բաժին

ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին
2. Սոցիալական աջակցության տարածքային բաժին

Հավելված 2
ՀՀ ---------- մարզի
----------համայնքի ավագանու
20--թ. --------- ---ի N -Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ---------- ՄԱՐԶԻ ---------- ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 52:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հասպիքային մեկ միավորի համար)
	ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
1.	Համայնքի ղեկավար		
2.	Վարչական ղեկավար		
3.	Համայնքի ղեկավարի տեղակալ		
4.	Համայնքի ղեկավարի խորհրդական		
5.	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար		
6.	Համայնքի ղեկավարի օգնական		
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
7.	Աշխատակազմի քարտուղար		
	Քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողի վերահսկողության բաժին		
8.	Բաժնի պետ		
9.	Գլխավոր մասնագետ		
10.	Առաջատար մասնագետ		
11.	Առաջին կարգի մասնագետ		
12.	Երկրորդ կարգի մասնագետ		
	Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին		
13.	Բաժնի պետ		
14.	Գլխավոր մասնագետ		
15.	Առաջատար մասնագետ		
16.	Առաջին կարգի մասնագետ		
17.	Երկրորդ կարգի մասնագետ		
	Առևտրի և ապասարկման, գովազդի և տուրիզմի զարգացման բաժին		
18.	Բաժնի պետ		
19.	Գլխավոր մասնագետ		
20.	Առաջատար մասնագետ		
21.	Առաջին կարգի մասնագետ		

22.	*Երկրորդ կարգի մասնագետ*		
Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժին			
23.	*Բաժնի պետ*		
24.	*Գլխավոր մասնագետ*		
25.	*Առաջատար մասնագետ*		
26.	*Առաջին կարգի մասնագետ*		
27.	*Երկրորդ կարգի մասնագետ*		
Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժին			
28.	*Բաժնի պետ*		
29.	*Գլխավոր մասնագետ*		
30.	*Առաջատար մասնագետ*		
31.	*Առաջին կարգի մասնագետ*		
32.	*Երկրորդ կարգի մասնագետ*		
Իրավաբանական, քարտուղարության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին			
33.	*Բաժնի պետ*		
34.	*Գլխավոր մասնագետ*		
35.	*Առաջատար մասնագետ*		
36.	*Առաջին կարգի մասնագետ*		
37.	*Երկրորդ կարգի մասնագետ*		
Ներքին աուդիտի բաժին			
38.	*Բաժնի պետ*		
39.	*Առաջատար մասնագետ*		
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին			
40.	*Բաժնի պետ*		
41.	*Առաջին կարգի մասնագետ*		
Սոցիալական աջակցության տարածքային բաժին			
42.	*Բաժնի պետ*		
43.	*Առաջատար մասնագետ*		
Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)			
44.	*Գլխավոր մասնագետ*		
45.	*Առաջատար մասնագետ*		
46.	*Առաջին կարգի մասնագետ*		
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
47.	*Հավաքարար*		
48.	*Պահակ*		
49.	*Գործավար*		
50.	*Վարորդ*		
51.	*Բանվոր*		
52.	*Էլեկտրիկ*		
	ԸՆԴԱՄԵՆԸ		